



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Վերագինման ժամանակաշրջան

Սեպտեմբերի վերջին ԱՄՆ պետքարտուղար Ջոն Զերիի այն հայտարարությունը, որ Արցախի հակամարտությունն այն հակամարտությունների շարքում է, որոնցում այժմ չի նկատվում կարգավորման հնարավորություն, շատ կծիկների թելեր է բացում:

Այնպիսի տպավորություն է, որ բացի Հայեպի շուրջ ընթացող կռիվներից՝ թե քաղաքական ու թե ռազմական ասպարեզում ամեն ինչ սառեցված է: Տեղաշարժ չկա ո՛չ Ուկրաինայում, ո՛չ ՌԴ-ի դեմ պատժամիջոցների սաստկացման կամ նվազեցման ու ոչ էլ Իրան-ԱՄՆ հարաբերությունների լուրերի մեջ: Կարծես ամեն ինչ սահմանափակված է Հայեպով: Թվում է, թե բոլոր դերակատարները սպասողական դրության մեջ են: Իսկ այդ սպասողական դրությունից օգտվելով՝ Սիրիայի իշխանություններն ու ՌԴ-ն փորձում են ինչ-որ առավելության հասնել Հայեպում:

Այս սպասողական իրավիճակը ակնհայտորեն կապված է ԱՄՆ-ում նոյեմբերին տեղի ունենալիք նախագահական ընտրությունների հետ: Մինչև 2017 թվականի հունվար-փետրվար ամիսները ԱՄՆ-ն ժամանակ չունի զբաղվելու աշխարհի իրադարձություններով: Դրա մասին է վկայում նաև Զերիի՝ սեպտեմբերին կատարած եզրահանգումը Արցախյան հարցի կապակցությամբ:

2016 թվականի ապրիլից հետո, երբ արդեն իսկ կայունացել էր Արցախի սահմանային իրավիճակը, համանախագահների միջնորդությամբ տեղի են ունեցել 2 հանդիպումներ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև: Առաջինը՝ Վիեննայում, մայիսին, և երկրորդը՝ Սանկտ-Պետերբուրգում, հունիսին: Ինչպես սպասվում էր (և Արցախի կողմից եւս ինչեցվեց նախքան վերոնշյալ հանդիպումները), որ եւ Բեկումնային իրադարձության ակնատեսն էլ չէր այս գույզ դիվանագիտական շփումների արդյունքում: Լարվածությունը սահմանագծին մնաց նույնը ու կրակոցները շարունակվեցին ու շարունակվում են:

Սակայն բեկումնային կարելի է համարել հայկական կողմի 2 ցուցադրական քայլեր, որոնք պարտավորեցրին Ալիևին և ընդհանրապես ադրբեջանական կողմին՝ խոստովանել, որ, մեղմ ասած, իրավիճակն իրենց օգտին չէ: Առաջինը «Իսկանդեր» հրթիռային համալիրի ցուցադրումն էր, իսկ երկրորդը՝ սահմանային արեւմտյան դիտարկման սարքերի տեղադրման լուրը: Այս երկու ցուցադրությունները եւ դրանից հետո բարձրացված վայնասունը նախ փաստեց, որ ադրբեջանական հոխորտանքը ռազմական առումով առավելություն ունենալու կապակցությամբ չի համապատասխանում իրականությանը եւ ապա պատճառ դարձավ, որ Ալիևը բացեիբաց խոստովանի, որ միջազգային հանրությունը պարտադրում է ճանաչել ԼՂՀ անկախությունը:

Անշուշտ, վերը նշված իրադարձությունները եւ այսպես կոչված «դադարը» չպետք է մեզ թույլ տան, որպեսզի հապաղենք օր առաջ սրբագրելու մեր բոլոր բացթողումներն ու թերացումները, որոնք ի հայտ եկան հատկապես ապրիլյան օրերին: Քաղաքական առումով՝ սա հնարավորությունների ժամանակաշրջան է, վերագինման, ժողովրդական ասացվածքով՝ քարերը հավաքելու: Քարերը նետելու ժամանակը չի ուշանա...



ՀՀԴ-ն կազմավորում է կամավորականների պահեստային գումարտակ

Ապրիլյան պատերազմի առաջին իսկ օրերից Արցախի ժամանեցին Հայ Յեղափոխական Դաշնակցության կամավորական խմբերը:

ՀՀԴ կառույցի անդամները՝ ավագից երիտասարդ, օրհասական պահին եկել էին Արցախ՝ մարտական գործողությունների ամենաթեժ վայրերում ապահովելու հայկական երկու պետությունների ազգաբնակչության եւ պետականության անվտանգությունը:

Հայ զինվորի կողքին կանգնելով, համախմբվածությամբ հակառակորդի նախահարձակ վարքին համարժեք պատասխան տալով՝ նրանք եւս միացան Ադրբեջանին լռեցնելու գործին: ՀՀԴ կամավորները երկու հերթափոխով ադրբեջանցիներից ազատագրված 5 մարտական դիրք էին պահում, այնպես կազմակերպված ու արագ մարտական պատրաստության եկած, որ անգամ գործող բանակի զինվորականները

զարմացել էին՝ կարծելով, որ կանավոր բանակի ստորաբաժանումներ են: Այնուհետեւ կամավորները ճանապարհիվեցին իրենց օջախները՝ չմոռանալով, որ դիրքերից է սկսվում յուրաքանչյուրի օջախը:

2016թ. հոկտեմբերի 13-ին հայտարարությամբ է հանդես եկել ՀՀԴ ՊՄ ազատամարտիկների հարցերի հանձնախումբը, որում մասնավորապես ասվում է.

«2016թ. ապրիլի 2-ից սկսված լայնածավալ մարտական գործողություններին հանպատրաստից կամավորականների մասնակցությունը վեր հանեց կազմակերպչական եւ պատրաստվածության մի շարք հարցեր, որոնք անհրաժեշտ է իրականացնել սպառնալից ժամանակաշրջանում: Այդ իսկ պատճառով՝ ՀՀԴ-ի հետ համաձայնեցված՝ ՀՀԴ Գերագույն մարմինը որոշում է կայացրել. կազմավորել կամավորականների պահեստային գումար-

տակ, որի կիրառումը նախատեսվում է միայն լայնածավալ մարտական գործողությունների վերսկսման դեպքում:

Գումարտակում կարող են անդամագրվել 20-ից մինչև 45 տարեկան, անկախ ծառայության տեսողությունից պարտադիր զինվորական ծառայություն անցած, բացառությամբ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու հետևանքով վաղաժամկետ զորացրված քաղաքացիները, ինչպես նաև պատերազմի կամ մարտական գործողությունների մասնակիցները՝ անկախ զինվորական ծառայություն անցնելու հանգամանքից: Ռազմական ունակությունները կատարելագործելու, վերապատրաստելու եւ ստորաբաժանումների ներդաշնակում իրականացնելու նպատակով կամավորականները կարող են կանչվել վարժական հավաքների»:

ՀՀԴ Արցախի կառույցի տեսակետը ԼՂՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ



ԼՂՀ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից սույն թվականի օգոստոսի 16-ին հրապարակված՝ ԼՂՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը քննարկվել է ՀՀԴ Արցախի կառույցի մակարդակով...

Կարդացե՛ք 4-րդ էջում

Չրույց ընթերցողի հետ



Հարգելի պատճառներից ելնելով՝ «Ապարաժ» թերթը մեկ ամիս ուշացումով է լույս տեսնում: «Ապարաժ»-ի նախկին խմբագիր Հերմինե Ավագյանն ունեցավ գույզ արու գավակ, որի համար շնորհավորում ենք իրենց ընտանիքին: Սեպտեմբեր ամսից խմբագիր նշանակվեցի ես:

Կարդացե՛ք 7-րդ էջում

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության հանդիպումները



ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցությունը պարբերաբար հանդիպումներ է ունենում գործադիր մարմնի ներկայացուցիչների հետ:

Հոկտեմբերի 11-ին խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանի գլխավորությամբ խմբակցությունը հանդիպում է ունեցել ԼՂՀ վարչապետ Արայիկ Զարուբյանի հետ: Հանդիպմանը քննարկվել են գլխավորապես գյուղատնտեսության զարգացման հայեցակարգի մշակման հետ կապված հարցեր:

Վարչապետ Ա. Զարուբյանը ներկայացրել է հայեցակարգի ընդհանուր սկզբունքները՝ մանրամասնելով առանձին ճյուղերի վերաբերյալ կառավարության մոտեցումները եւ շեշտադրելով, որ մասնագիտական ուսումնասիրություններն ու քննարկումները դեռեւս ընթացքում են: Նա իր խոսքում մասնավորապես ասել է. «Կարծում եմ, որ ես բավարար քաղաքական ու գործարար փորձառություն ունեմ՝

նախաձեռնելու գյուղատնտեսության զարգացման հայեցակարգի մշակումը, ինչը սահմանելու եւ ձեւավորելու է Արցախի գյուղատնտեսության առաջիկա տարիների զարգացման հիմնական սկզբունքներն ու ինստիտուտները: Դրա շնորհիվ ի վիճակի ենք լինելու երաշխավորել բնագավառի ինտենսիվ զարգացումը՝ հենված մասնագիտական խորը գիտելիքների եւ արդի տեխնոլոգիաների ակտիվ կիրառման վրա: Հայեցակարգի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ են ե՛լ մասնագիտական, ե՛լ հանրային քննարկումներ սկզբնական փուլում, իսկ հետո՝ հանրային լայն աջակցություն դրա իրագործման ճանապարհին»:

Խմբակցության անդամները ներկայացրել են առանձին ճյուղերի զարգացման վերաբերյալ իրենց տեսակետները եւ հայեցակարգի մշակման հարցում կառավարության ու համապատասխան մասնագետների հետ համագործակցելու պատրաստակամությունն հայտնել:

«Առավել ուշադրություն պետք է դարձնենք շրջանների եւ գյուղերին: Ապրիլյան դեպքերը մեկ անգամ եւս հուշեցին, որ ինչքան սահմանները լինեն անառիկ, այնքան թիկունքն ավելի ապահով է լինելու», - ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար Դավիթ Իշխանյանի հենց այս խոսքերով է հոկտեմբերի 12-ին մեկնարկել ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության հանդիպումը ԼՂՀ քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյանի հետ: Հանդիպմանը քննարկվել են գլխավորապես գյուղատնտեսության ոլորտում քաղաքաշինության նախարարության դերակատարության եւ հայեցակարգի մշակման հետ կապված հարցեր:

Գյուղական բնակավայրերում բնակարանաշինության հարցին անդրադառնալով՝ Կարեն Շահրամանյանը նշել է, որ գնալով այդ հարցն օրախնդիր է դառնում հանրապետությունում, քանի որ այդ տները կառուցվել են առանց շինարարական նորմերը հաշվի առնելու:

«Շատ դեպքերում անիմաստ է գումար ծախսել այդ տների վրա, քանի որ դրանք ենթակա են վերակառուցման», - նշել է Կարեն Շահրամանյանը: Հանդիպման հուզող հարցերից էր նաեւ դպրոցաշինությունը, ճանապարհաշինությունը եւ գյուղերի ջրամատակարարումը: Ըստ Կարեն Շահրամանյանի՝ դպրոցները կառուցվում են ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության տրամադրած նախագծերով: Թե ինչո՞ւ որոշ համայնքներում դպրոցները կառուցվել են պահանջվածից մեծ չափերի, հարցին Կ. Շահրամանյանը պատասխանել է. «Այդ համայնքներում մասնակապարտեզը պետք է համատեղվի դպրոցի շենքում: Դա միանգամայն կրճատելու է ծախսերը»:

Անդրադառնալով ջրամատակարարման խնդրին՝ նախարարը նշել է, որ 2017 թվականի բյուջեով նախատեսվելու է գյուղերի ջրամատակարարման ծախսերը:

Ինչ վերաբերում է ճանապարհաշինությանը, ապա, ըստ ԱԺ-ի օրենքի, պետական բյուջեից 2.7 միլարդ դրամն ավելացվել է եւ ուղղվելու է կապիտալ ծախսերին, որից մոտ 100 միլիոն դրամն ուղղվելու է ճանապարհների վերանորոգմանը:

Սակայն, ըստ Կարեն Շահրամանյանի, ճանապարհաշինությունը համայնքի կողմից իրականացվելիք աշխատանք է: «Ստեփանակերտի քաղաքապետարանը պետական բյուջեից տրամադրվող գումարներով պետք է զբաղվի ճանապարհների ընթացիկ վերանորոգմամբ», - շեշտել է Կ. Շահրամանյանը:

Խոսելով բազմազան ընտանիքներին տներ տրամադրելու գործընթացի մասին՝ նախարարը նշել է, որ 5 երեխա ունեցող ընտանիքների համար տների շինարարությունն ավարտվելու է 2017 թվականին: Իսկ 6 երեխա ունեցող ընտանիքներին, ըստ կառավարության որոշման, բնակարանային հանձնաժողովի որոշումից հետո պետք է կառուցվի 3 տարվա ընթացքում: «Առաջնայինը կառուցվում են սոցիալապես անապահով բազմազան ընտանիքների տները: Իսկ մնացած դեպքերը՝ ըստ ընթացակարգի», - ասել է նախարարը:

Անդրադառնալով Ասկերան քաղաքում ընթացող զբոսայգու բարեկարգմանը՝ նախարարը նշեց, որ շինարարությունը կատարվում է պետական բյուջեի հաշվին:

ԼՂՀ ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանն այն կարծիքին է, որ միայն գյուղերի օպտիմալացման ծրագիրը կյանքի կոչելով հնարավոր է կրճատել պետական բյուջեի ծախսերը:

Հանդիպումների ընթացքում պատգամավորները այլ հարցեր եւ առաջարկություններ են ուղղել գործադիր մարմնի ղեկավարին ու քաղաքաշինության նախարարին, ստացել համապատասխան պարզաբանումներ:

«ԱՊՍՈՒՄ»

ԼՂՀ իշխանությունները պատրաստ են համագործակցել ՄԱԿ-ի հետ



ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի 33-րդ նիստի բացման արարողությանը ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Չեյր Ռաադ ալ-Յուսեյնն ասել էր, որ 2016թ. ապրիլյան դեպքերից հետո իրենք չեն կարող այցելել Արցախ եւ ստուգել մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հակասական բողոքները: Ըստ հանձնակատարի՝ վերջին տասնամյակներում 100-հազարավոր ներքին տեղահանվածների եւ փախստականների խնդրանքները պատշաճ կերպով չեն ուսումնասիրվել ոչ իր գրասենյակի, ոչ միջազգային հանրության կողմից:

Սեպտեմբերի 29-ին կայացած ԱԺ նիստում կառավարության հարց ու պատասխանի ժամանակ վերոնշյալ խնդրի վերաբերյալ հարցը բարձրացրել էր ԼՂՀ Ազգա-

յին ժողովի «Շարժում-88» խմբակցության ղեկավար Էդուարդ Աղաբեկյանը:

«Ապառաժ»-ի հետ գրույցի ժամանակ պատգամավորը նշել է, որ միջազգային հանրությունը պետք է արձագանքի այդ հանցագործություններին՝ դրանց կրկնությունը կանխելու նպատակով:

«Ստահոգություն ունեմ, որ որոշ ժամանակ անց մեր խաղաղ բնակչության եւ մարտիրոսված զինվորների խոշտանգումների դեպքերը կարող են հակադարձվել եւ վերագրվել մեզ», - նշել է պատգամավոր Էդուարդ Աղաբեկյանը:

ԼՂՀ արտաքին գործերի նախարարությունը համապատասխան խողովակներով պատասխան նամակ է հղել Չեյր Ռաադ ալ-Յուսեյնին եւ իրազեկել նրան Արցախում ընդունելու պատրաստակամության մասին: Ազ նախարար Կարեն Միրզոյանը հավաստիացրել է, որ ԼՂՀ իշխանությունները պատրաստ են ՄԻԳՅԳ-ի հետ անկեղծ համագործակցության՝ ուղղված ժողովրդավարական նորմերի եւ սկզբունքների ամրապնդմանը, ինչպես նաեւ կոնֆլիկտային իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանությանը:

ԼՂՀ արտաքին գործերի նախարարությունը սպասում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի պատասխան նամակին: Ստանալու դեպ-

քում՝ խոստացան անմիջապես տեղեկացնել «Ապառաժ» թերթին:

Այս խնդրի վերաբերյալ մեր թերթի հարցմանը պատասխանելով՝ ԼՂՀ ԱԳՆ մամուլի քարտուղարն անդրադարձավ նաեւ ապրիլի սկզբին Ադրբեյջանի կողմից սանձազերծված լայնամասշտաբ ագրեսիային եւ դրա ընթացքում Ադրբեյջանի զինված ուժերի կողմից իրագործված մարդու իրավունքների զանգվածային եւ կոպտագույն խախտումների ու ռազմական հանցագործությունների մասին միջազգային հանրությանը տեղեկացնելու ուղղությամբ ԱԳՆ կատարած աշխատանքներին:

«Մասնավորապես, ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում եւ Եվրոպայի Խորհրդում տարածվել են ԼՂՀ ԱԳՆ հայտարարագրերը, որտեղ մասնաբաժիններ են ներկայացվել ադրբեյջանական ագրեսիայի պատճառների ու հետեւանքների, ինչպես նաեւ Ադրբեյջանի զինված ուժերի կողմից իրագործված մարդու իրավունքների խախտման կոպտագույն դեպքերի եւ ռազմական հանցագործությունների փաստերի առնչությամբ: Միջազգային կազմակերպություններում ԼՂՀ ԱԳՆ-ի կողմից տարածվել են նաեւ Պաշտպանության նախարարության եւ Ռազմազորների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող պետական հանձնաժողովի հայտարարությունները, ԼՂՀ Գլխավոր դատախազության կողմից տրամադրված նյութերը՝ ադրբեյջանական կողմի հանցագործությունների առթիվ հարուցված քրեական գործերի վերաբեր-

յալ», - մեզ հետ գրույցում նշել է Անի Սարգսյանը:

Անի Սարգսյանը կարեւորել է նաեւ արտերկրում ԼՂՀ մշտական ներկայացուցիչների եւ ԱԳՆ պատասխանատու աշխատակիցների աշխատանքը: Աշխատանքներ են տարվել նաեւ միջազգային իրավապաշտպան կառույցների հետ: Մասնավորապես, մի շարք հանդիպումներ են անցկացվել այդ կառույցների ներկայացուցիչների հետ: Բացի այդ, ԱԳՆ-ն օժանդակել է ԼՂՀ օմբուդսմենի՝ Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության եւ Պաշտպանության բանակի զինվորների նկատմամբ ապրիլի 2-5-ն ընկած ժամանակահատվածում ադրբեյջանական զինված ուժերի կատարած դաժանությունների մասին միջանկյալ հրապարակային զեկույցը մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող համապատասխան կազմակերպություններում տարածելու գործում:

«Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ իրագործված հանցագործությունների պատասխանատուների անպատժելիությունը խրախուսում է հետագայում եւս Ադրբեյջանի կողմից ուժի կիրառումը, այդ իսկ պատճառով դարաբաղյան կողմը շարունակելու է քայլեր ձեռնարկել՝ ուղղված միջազգային հանրության իրազեկմանը եւ նրա կողմից ադրբեյջանական կողմի գործած հանցագործությունների դատապարտմանը», - շեշտել է մամուլի քարտուղարը:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Հալեպի վերջը շարունակում է կսկծալ

Արդեն 6-րդ տարին է, ինչ Սիրիան գտնվում է արտաքին ուժերի կողմից ուղղորդված ահաբեկչական պատերազմի մեջ: Այս պատերազմի ամենատեսակալի հատվածն ավելի քան 4 տարի տեղի է ունենում Հալեպում: Հալեպը ոչ միայն իր աշխարհագրական դիրքով եւ տնտեսական ազդեցիկ գործոն լինելու հանգամանքով է տարբերվում Սիրիայի մնացած նահանգներից, այլև բնակչության գույնը պատկերով: Հալեպում, Սիրիայի այլ նահանգների համեմատությամբ, հայ համայնքն ուներ եւ թերեւս ունի մեծագույն ներկայություն:

Ցավոք, Հալեպը կրեց եւ շարունակում է կրել ահաբեկչական պատերազմի դաժանագույն հետեւանքները: Եվ ինչպես Հալեպի ողջ ժողովուրդը, այնպես էլ հալեպահայությունը՝ որպես այդ ժողովրդի կարեւոր մասնիկ, ենթարկվում է ահաբեկչական հարձակումների՝ տալով նահատակներ եւ վիրավորներ, կրելով նյութական ծանր վնասներ եւ ապրելով հոգեկան ծանր, երբեմն անսխիթար պահեր՝ դեմ հանդիման կենցաղային եւ ապահովության հետ կապված բազում դժվարությունների: Այլ կերպ՝ հալեպահայությունը, ինչպես Հալեպի ողջ ժողովուրդը, ահաբեկչության ալիքի դեմ գոյության պայքար է մղում:

Վերջին շրջանում, երբ հորիզոնում սկսեցին նշմարվել սիրիական խնդրի լուծումն ավետող հույսի նշույլներ, ահաբեկչական խմբավորումներն ու նրանց աջակցող պետությունները, ելնելով իրենց նեղ շահերից, աջակցեցին Հալեպի ներսում ահաբեկչական խմբա-

վորումների հարձակումների սաստկացմանը: Այդ հարձակումները հետ մղել եւ Հալեպի շրջաններն ահաբեկչական խմբավորումներից ազատել փորձող սիրիական բանակի յուրաքանչյուր առաջխաղացման դեմ նրանք թիրախավորեցին խաղաղ բնակչությանը՝ քառասյին վիճակ ստեղծելու եւ ժողովրդին խուճապի մատնելու նպատակով:



Ահաբեկչական խմբավորումների դիրքերի մերձակայքում գտնվող հայաբնակ մի շարք թաղամասեր առավել մեծ վնասներ կրեցին: Համայնքն այս օրերին տվեց 7 զոհ եւ ավելի քան 13 վիրավոր: Ինչպես պատերազմի ամբողջ ընթացքում, նույնպես հարձակումների ակտիվացման վերջին օրերին, հալեպաբնակ ժողովուրդը ազատ էր Սիրիայի մեջ եւ թե դրանից դուրս իր տեղաշարժերում:

Հալեպահայության որոշակի հատ-

ված անվտանգության նկատառումներով դիմեց եւ շարունակում է դիմել երկրից դուրս գալու կամ երկրի առավել ապահով շրջաններ տեղափոխվելու տարբերակին:

Պատերազմի ամբողջ ընթացքում համայնքի ներսում հայթայթվում են երկրի ներսում մնացողների համար նյութական միջոցներ, իսկ երկրից դուրս եկող-

ճգնաժամային այսպիսի պայմաններում մամուլի էջերից հնչող եւ գաղութի պահպանման ջանքերի, ազգային կալվածքների գոյության կամ նեղ անձնական շահերի մասին մի շարք անպատասխանատու հրապարակումներ այս պահին ոչ մի նշանակություն չունեն: Մեկնելու որոշումը յուրաքանչյուր ընտանիք կայացնում է իր նյութական հնարավորություններից եւ անվտանգության պայմաններից ելնելով, իսկ մնացողներին հնարավորության սահմաններում պետք է օգնել, զորակցել:

Այսօր աղետահար Հալեպում շարունակում են գործել ազգային, միութենական կառույցներ, հաստատություններ՝ ճգնաժամային պայմաններին հատուկ բոլոր կարողություններով:

Պատերազմական այս քառասուն, Հալեպում տիրող իրավիճակի բոլոր մանրամասներին կամ համայնքի գոյատևման մաքառումներին անտեղյակ մի շարք լրատվամիջոցներ, բարձրացնելով միանշանակ պատասխաններ չունեցող հարցեր եւ խուճապի մատնող արտահայտություններ օգտագործելով, նպաստում են խուճապային տրամադրությունների սրմանը՝ մոռանալով իրենց ուղենշային դերակատարությունը:

Հայրենադարձության ուղղորդման, սիրիահայ՝ դեռեւս գոյատևող համայնքին տեղ կանգնելու համար մեր հնարավորությունները լարելու ահագանգն արդեն հնչեցված է:

«Գանձասար»-ի խմբագրական հոկտեմբեր, 2016թ.

ՀՀՀ Հայ դատի հանձնախումբը հալեպահայերին օգնելու քայլեր է ձեռնարկում

Հալեպահայերի օգնության հարցը ՀՀՀ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի օրակարգի առանցքում է: Այս մասին «Արմենպրես»-ի հետ զրույցում նշեց ՀՀՀ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի հաղորդակցության պատասխանատու Պետո Դեմիրճյանը:

«Եվրոպայի Հայ դատի հանձնախումբը սիրիահայերին աջակցելու հարցի առնչությամբ քննարկումներ է կազմակերպում տարբեր ուղղություններով: Կապի մեջ ենք Եվրամիության որոշ վարչությունների հետ: Քննարկումներ ենք անցկացնում Բելգիայի խորհրդարանի պատգամավորների հետ», - ասաց Պետո Դեմիրճյանը:

Պետո Դեմիրճյանը նշեց, որ Հայ դատի Եվրոպայի հանձնախումբը նման փորձ ունի: Նախկինում, օրինակ, Բելգիայի ԱԳՆ-ի միջոցով են օգնություն հասցրել Սիրիայի եւ Իրաքի հայությանը: Դրանից բացի, պատվիրակություններ են ուղարկվել այդ երկրներ՝ տեղում իրավիճակին ծանոթանալու:

ՀՀՀ Հայ դատի Եվրոպայի հանձնախմբի հաղորդակցության պատասխանատուն տեղեկացրեց, որ քննարկվում է առաջիկայում եւս Լիբանան եւ Սիրիա պատվիրակություն ուղարկելու հարցը: Նախատեսվում է, որ պատվիրակության մեջ կընդգրկվեն ներկայացուցիչներ հանձնախմբից եւ պատգամավորներ Բելգիայի խորհրդարանից:

Ֆրանսիայի Սենատն ընդունել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը



Ֆրանսիայի Սենատը հոկտեմբերի 14-ին ընդունել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը:

Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի համանախագահ Մուրադ Փափազյանը մեզ հետ զրույցում նշեց, որ «Քաղաքացիություն եւ ազատություն» օրենքի բարեփոխված տարբերակին կողմ է քվեարկել 156, դեմ՝ 146 պատգամավոր: Փափազյանի խոսքով՝ թուրքերը բավական ակտիվ աշխատանք էին տանում, որ խափանեն օրինագծի ընդունումը, սակայն դա նրանց չի հաջողվել. «Սա նշանակում է, որ Ֆրանսիայի խորհրդարանը վերջնական ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախագիծը: Եթե լինի դիմում, հարցը կարող է քննարկվել նաեւ Սահմանադրական խորհրդում»:

Ավելի վաղ Ֆրանսիայի Սենատը հետաձգել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի քն-

նարկումը: Ֆրանսիայի Սենատը հոկտեմբերի 12-ին սկսել է քննարկել «Քաղաքացիություն եւ ազատություն» օրենքի բարեփոխված օրինագիծը, սակայն կեսգիշերն անց, քննարկումները դեռ չավարտած, Նիտի Նախագահը որոշել է քննարկումը հետաձգել երկու օրով:

Օրինագծի 37-րդ, 38-րդ հոդվածները վերաբերում են Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացմանը:

Քննարկումներին հետեւել են Ֆրանսահայ կազմակերպությունները համակարգող խորհրդի (CCAF) համանախագահները՝ Արա Թորանյանն ու Մուրադ Փափազյանը:

Հատկանշական է, որ նույն իրիկունը՝ այն ժամերին, երբ ընթանում էին քննարկումները, խորհրդարանի նախագահը՝ ժերար Լառճեն, ընդունել է Թուրքիայի Ազգային ժողովի նախագահ Իսմայիլ Զաիրամանին, եւ այդ հանդիպմանը հաջորդել է խորհրդարանի ֆրանս-թուրքական բարեկամության խմբի ընթրիքը:

Մուրադ Փափազյանը արձագանքել է Ֆրանսիայի Սենատի կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունմանը: «Բրավո, Սենատ», - այսպիսի գրառում է կատարել Փափազյանը իր ֆեյսբուքյան էջում՝ շնորհակալություն հայտնելով սոցիալիստներին ու կոմունիստներին, ովքեր կողմ են քվեարկել նախագծին:

«Հանրապետության նախագահի խոստումը կատարված է», - գրել է Փափազյանը:

Իսկ «Արմենպրես»-ի հետ զրույցում նա նշել է, որ օրինագծի ընդունումը լուրջ հաջողություն է:

«Սա բավական լուրջ հաջողություն է, զգալի աշխատանք է կատարվել մեր կողմից: Չմոռանանք, որ թուրքերը լուրջ լոբբինգ կատարեցին, բայց Սենատը քվեարկեց այն տարբերակի օգտին, որը քվեարկվել էր ամռանը Ազգային ժողովում: Դա նշանակում է, որ Ֆրանսիայի խորհրդարանը վերջնական ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը՝ », - ասել է Փափազյանը:

ՀՀ Արցախի կառույցի տեսակետը ԼՂՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ

ԼՂՀ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից սույն թվականի օգոստոսի 16-ին հրապարակված՝ ԼՂՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը քննարկվել է ՀՀ Արցախի կառույցի մակարդակով, որի արդյունքում ի մի են բերվել որոշակի տեսակետներ, որոնք ներկայացնում ենք ստորև.

2016թ. օգոստոսի 16-ին հրապարակված՝ սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի հուլիսի 30-ի նիստում հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը բաղկացած է անվերահասի ներածությունից և հինգ հիմնական բաժիններից.

1. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները
2. Կառավարման համակարգը
 - 2.1. Գործող համակարգի թերությունները
 - 2.2. Անցում նախագահական կառավարման համակարգի
 - 2.3. Կառավարման առաջարկվող համակարգի հիմնական դրույթները
3. Դատական իշխանությունը
4. Տեղական ինքնակառավարումը
5. Հանրաքվեն

Ներածությունը հաստատում է, թե «առաջացել է սահմանադրական կորուստի իրավակարգավորումների հետագա բարելավման կարիք, որը թելադրված է հանրային կյանքի նոր իրողություններով, երկրի անվտանգության ու առաջընթացի ապահովման նոր հրամայականներով և պետք է նպաստի կառավարման արդյունավետության բարձրացմանը, երկրի ինքնիշխանության ամրապնդմանը, ժողովրդավարական գործընթացների հետագա զարգացմանը, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման երաշխավորման ու պաշտպանության առավել արդյունավետ կառուցակարգերի արմատավորմանը, ներքին հակասություններից զերծ կառավարման համակարգի սահմանմանը, դատական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգերի անկախության ու ինքնուրույնությանը, ինչպես նաև անմիջական ժողովրդավարության ինստիտուտների կատարելագործմանը»:

Հայեցակարգի հիմնական բացթողումը պետության սահմաններին է վերաբերվում: Գործող Սահմանադրությունում այդ հարցին անդրադառնում է «Եզրափակիչ և անցումային դրույթներ» գլխում տեղ գտած Սահմանադրության վերջին՝ թիվ 142 հոդվածը, որն ասում է. «Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածքի ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործության ներքո»: Անհրաժեշտ է Սահմանադրությունում առավել հստակ ամրապնդել ու ամրագրել ԼՂՀ տարածքային ամբողջականության (ներկա բռնագրավված տարածքներով) դրույթը:

Հայեցակարգի 1, 3, 4 և 5 բաժիններում բանաձեւված առաջադրանքները, մեր տեսանկյունից, իսկապես կնպաստեն «մարդու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման երաշխավորման ու պաշտպանության առավել արդյունավետ կառուցակարգե-

րի արմատավորմանը», «դատական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգերի անկախության ու ինքնուրույնությանը, ինչպես նաև անմիջական ժողովրդավարության ինստիտուտների կատարելագործմանը»:

Սակայն, հայեցակարգի 2-րդ բաժնում ներկայացված առաջադրանքները ոչ միայն չեն նպաստում «կառավարման արդյունավետության բարձրացմանը, երկրի ինքնիշխանության ամրապնդմանը, ժողովրդավարական գործընթացների հետագա զարգացմանը», «ներքին հակասություններից զերծ կառավարման համակարգի սահմանմանը», այլև անտեսում են «երկրի անվտանգության ու առաջընթացի ապահովման նոր հրամայականները»:


Հայեցակարգի 2րդ բաժինը նախ ներկայացնում է «գործող (կիսանախագահական) համակարգի թերությունները», որոնցից գլխավորն է համարում «կիսանախագահական համակարգի բնորոշ գործադիր իշխանության երկակիությունը» (դուալիզմը), որտեղ «ժողովուրդն ուղղակի մանդատով օժտում է երկու մարմինների՝ Ազգային ժողովին և Հանրապետության նախագահին, սակայն վերջինս իրավաբանորեն գործադիր իշխանության ղեկավարը չէ և



այդ իշխանությունը կիսում է խորհրդարանի առջև պատասխանատու կառավարության հետ»:

Այս բաժնում առաջ քաշված մտահոգությունները չեն հիմնված Արցախի Հանրապետության 25 տարիների փորձի վրա, այլ ներկայացնում են զուտ տեսական հավանականություններ, որոնք կարող են վտանգավոր լինել Արցախի պայմաններում գտնվող պետության համար: Առավել, այս բաժնում ներկայացված մտահոգություններն ու առաջարկված լուծումները հաճախ հակասական են և չեն բխում նույն տրամաբանությունից: Մասնիկներ վերցնելով պետական կառավարման խորհրդարանական, կիսանախագահական և նախագահական համակարգերի հատկանիշներից՝ առաջարկվում է աշխարհում նախադեպը չունեցող պետական կառավարման մի համակարգ, որտեղ «Հանրապետության նախագահն ուղղակիորեն ընտրվում է ժողովրդի կողմից(...) արտախորհրդարանական եղանակով ձեւավորում է գործադիր իշխանությունը և հանդիսանում է գործադիր իշխանության ղեկավարը, (...) ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև (...): Ազգային ժողովը ձայների բացարձակ մեծամասնությամբ կարող է անվտանգություն հայտնել Հանրապետության նախագահին: Զանի

որ Հանրապետության նախագահն ընտրվում է ուղղակիորեն ժողովրդի և ոչ թե խորհրդարանի կողմից, (...) ապա նրան անվտանգություն հայտնելն ինքնուրույնության հանգեցնում է Ազգային ժողովի լուծարմանը»: Այլ խոսքով՝ այն հիմնավորումը, թե իբր կառավարման այս մոդելը ապահովելու է գործադիր իշխանության կայունությունը, իրականում հանգեցնելու է մի իրավիճակի, երբ անիմաստ է դառնում ժողովրդի ուղղակիորեն պետական երկու կառավարման ինստիտուտներ ընտրելու իրավունքը, և պետությունը միաժամանակյա ընտրությունների պարագայում միանգամից զրկվում է ե՛լ գործադիր, ե՛լ օրենսդիր մարմիններից: Եթե հաշվի առնենք հայեցակարգի այն հաստատումը, թե «միայնակ անվտանգություն հայտնելու արդյունքում երկու մարմինների նոր ընտրություններ անցկացնելու պահանջը կստիպի, որ ե՛լ Հանրապետության նախագահը, ե՛լ խորհրդարանը ծայրահեղ անհրաժեշտության դեպքում դիմեն միմյանց լիազորությունները դադարեցնելու քայլին: Դրանով կառավարման համակարգը կլինի ավելի կայուն», ապա անիմաստ կդառնա այն հիմնավորումը, թե իբր «այս համակարգը (...) կապահովի արդյունավետ հակակշիռներ, զերծ կպահի կառավարման համակար-



գը փակուղային իրավիճակներում հայտնվելուց», որովհետև այս «հակակշիռները» գործելու են միայն «ծայրահեղ անհրաժեշտության դեպքում»:

Իրականում, հայեցակարգի բոլոր հիմնավորումներն այն մասին, թե իբր այս համակարգը «կկարելորի նաև խորհրդարանական հակակշիռների գործուն դերակատարությունը, ճիշտ չէ և ապահովված չէ առաջարկվող հայեցակարգով: Ընդհակառակը, հայեցակարգում ներկայացված առաջարկներն ստեղծում են գերկենտրոնացված նախագահական /գործադիր իշխանություն, որի համար խորհրդարան/ օրենսդիրը ունի միայն ձեւական բնույթ և լիազորություն: Այսպես, հայեցակարգում սեւով սպիտակի վրա գրված է. խորհրդարանական «Հակադիր մեծամասնությունների ռիսկը մեղմելու համար առաջարկվում է Հանրապետության նախագահի և խորհրդարանի ընտրություններն անցկացնել միաժամանակ: Նույն նպատակին է ծառայում նաև այն դրույթը, ըստ որի՝ Հանրապետության նախագահի թեկնածություններ կարող են առաջադրվել միայն խորհրդարանական ընտրություններին մասնակցող կուսակցությունների կողմից»: Հակադիր քաղաքական ուժերի պատկանող նախագահ և խորհրդարանի մեծամասնությունը ընտրելու հնարավորությունները պակասեցնելու այս մոտեցումով, հե-

տեաբար, տեղին չի խոսել օրենսդիր կողմից գործադիրի վրա որևէ հակակշիռի մասին, որովհետև, հայեցակարգի մեկ այլ տրամաբանությամբ՝ նախագահի թեկնածուին առաջադրած կուսակցությունը «չափազանցված է իր քաղաքական լիդերի հաջողության մեջ»:

Առավել, այլապես տեսական հավանականությունների վրա հիմնված հայեցակարգը չի անդրադառնում այն տեսական հավանականության, որ առաջարկվող համակարգում միաժամանակ կայացած նախագահական և խորհրդարանական ընտրություններում նախագահը ընտրվի մեկ կուսակցությունից, իսկ խորհրդարանի մեծամասնությունը՝ մեկ այլ, հակադիր կուսակցությունից: Նման հավանականության դեպքում առաջարկվող համակարգի պատասխանը կլինի՝ նոր ընտրություններ. իսկ իրականությունն այն է, որ եթե երկու հակադիր քաղաքական ուժերն ընտրվել են ժողովրդի կամքի ազատ արտահայտությամբ, կարճ ժամկետում ստիպել ժողովրդին մեկ այլ ընտրություն կատարել՝ երկիրը դուրս բերելու կառավարման փակուղային վիճակից, նշանակում է բռնակալ ժողովրդի ազատ կամքի վրա, առավել ևս՝ երբ նոր ընտրությունները ինքնին չեն կարող բացառել նույն պատկերի կրկնությունը:

Մեկ այլ հակասությամբ՝ հայեցակարգը մի կողմից իբր կարեւորում է կուսակցությունների դերակատարությունը (նախագահի թեկնածու առաջադրելու միակ իրավասու, համամասնական համակարգով խորհրդարան), սակայն, մյուս կողմից կասկածի է ենթարկում այդ կուսակցություններին տրված վստահության քվեն, երբ հաստատում է, թե «նման համակարգի սկզբունքային առավելությունն այն է, որ գործադիր իշխանության ընտրության հարցը, ինչպես նախագահական համակարգում, լուծում է ժողովուրդը, այլ ոչ թե կուսակցությունները ետկուլիսյան բանակցությունների ընթացքում, ինչը հաճախ տեղի է ունենում բազմաթիվ կուսակցություններ ունեցող պառլամենտական երկրներում»:

Ճիշտ չէ նաև այն հաստատումը, թե առաջարկվող համակարգում, «Հանրապետության նախագահի և խորհրդարանի ընտրությունների միաժամանակյա անցկացումը վերացնում կամ նվազագույնը էականորեն մեղմում է նախագահական և կիսանախագահական համակարգին բնորոշ «հաղթողը ստանում է ամեն ինչ» սկզբունքը: Նախագահական ընտրություններում երկրորդ տեղ զբաղեցրած թեկնածուն, որպես կանոն, երկրորդ ուժը կլինի նաև պառլամենտում»: Իրականում, առաջարկվող համակարգում «հաղթողը ստանում է ամեն ինչ», որովհետև, ինչպես պարզվում է հայեցակարգում այս և այլ հաստատումներից, իրական նպատակը միակուսակցական համակարգ ստեղծել է, որովհետև՝ եթե նույնիսկ խորհրդարանում «երկրորդ ուժը» ունենա բավական մեծ թվով տեղեր, միեւնույնն է՝ գործադիրին հակակշռելու հնարավորություն չունի, որովհետև հանրապետության նախագահն ու խորհրդարանի մեծամասնությունը նույն քաղաքական ուժից են, և խորհրդարանում փոքրամասնությունը նախագահի վրա ազդելու ոչ մի հնարավորություն չի ունենա, իսկ խորհրդարանը կվերածվի սոսկ նախագահի կցորդի՝ ըստ էության վերցնելով նրա դերակատարությունը իշխանության մեջ: → 5

ՀՅԴ Արցախի կառույցի տեսակետը ԼՂՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ

4 ← Իրականում, պետության կառավարման համակարգի մասին հայեցակարգի բարձրագույն մտահոգությունների լուծման ամենարդյունավետ տարբերակը համամասնական ընտրակարգով խորհրդարանական համակարգն է, որի դեմ հայեցակարգում կա ընդամենը մեկ պարբերություն. «Նման կայունություն չի կարող երաշխավորել նաեւ կառավարման խորհրդարանական համակարգը, քանի որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարագայում, հաշվի առնելով Ազգային ժողովի փոքրաքանակությունը, կայուն մեծամասնության վերաբերյալ դրույթները կիրառելի չեն»:

Սխալ է հայեցակարգի այս առարկությունը, որը կայուն մեծամասնության վերաբերյալ դրույթները կապում է Ազգային ժողովի անդամների ընդհանուր թվի մեծ կամ փոքր լինելու փաստի հետ: Հարյուր տոկոս համամասնական ընտրակարգով խորհրդարանը, անկախ իր անդամների թվի քանակից, կարող է ունենալ կայուն մեծամասնության դրույթներ՝ հիմնված այդ քանակի հնարավորությունների վրա:

Խորհրդարանական համակարգում առավելագույնս է ժխտվում ժողովրդի կամքի ստորադասումը իշխանության կամքին, եւ անցում է կատարվում անձնակենտրոն կառավարման համակար-

գից բազմակուսակցական, հակակշռող եւ զսպող կառավարման համակարգի՝ այդ ամենն ամրագրելով իշխանությունների բաժանման եւ տարանջատման սկզբունքով:

Խորհրդարանական համակարգ հաստատելու սահմանադրական փոփոխությունների արդյունքում պետք է ընտրություններում հաղթած քաղաքական ուժերին հակակշռեն ընդդիմադիր ուժեր, որոնք սահմանադրական մակարդակով կստանան իշխանության բոլոր մարմինների նկատմամբ վերահսկողության հնարավորություն: Ընդդիմությունը պետք է ունենա ոչ միայն վերահսկողական լիազորություններ, այլ նաեւ իրական ազդեցություն իշխանության մի կարգ մարմինների կազմավորման գործում:

Խորհրդարանական համակարգը մի կողմից կուժեղացնի ընդդիմության ուժերը, մյուս կողմից կստիպի գործադիր իշխանությանը լինել առավել հաշվետու եւ պատասխանատու սեփական վարքագծի համար:

Կառավարման խորհրդարանական ձեռնարկի ժողովը պետք է ոչ միայն ընդունի օրենքներ, այլեւ դրանք գործադիր իշխանության կողմից կատարելու նկատմամբ ստանձնի վերահսկողական գործառնություններ: Հենց այս վերահսկողության շրջանակներում է, որ

կառավարությունը մշտապես հաշվետու պետք է լինի Ազգային ժողովին եւ նրա միջոցով՝ ժողովրդին:

Ազգային ժողովը պետք է ընտրվի բացառապես համամասնական ընտրակարգով: Ազգային ժողովը միշտ գործունակ լինելու համար կարելի է կոալիցիաների ձեւավորման խնդիրը, որն իր արտացոլումը պետք է գտնի Սահմանադրությունում:

Սահմանադրական փոփոխություններով պետք է զարգացվեն բիզնեսի եւ քաղաքականության տարանջատման սահմանադրական առկա իրավակարգավորումները՝ նախատեսելով որոշակի սահմանափակումներ եւ պատասխանատվության հնարավորություն:

Կարելի է սահմանադրորեն հաղթահարել քաղաքական մեկիշխանությունը եւ քաղաքացիական հասարակությանն ակտիվ դերակատարություն վերապահել իշխանության գործունեության նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու հարցում:

Տեղական ինքնակառավարման համակարգի ձեւավորման հարցում պետք է նախաձեռնել պետական կառավարման ապակենտրոնացման, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման համակարգի ֆինանսական, կազմակերպական եւ կառուցվածքային անկախության իրա-

կան հնարավորություններ:

Պետական իշխանության երրորդ ճյուղը՝ դատական համակարգը, որը միակ պատասխանատուն է երկրում արդարություն իրականացնելու համար, առաջադրվող փոփոխությամբ պետք է դառնա գործադիր եւ օրենսդիր իշխանություններից ավելի անկախ, որոնք պետք է նպաստեն դատական իշխանության մարմինների կազմավորման նոր ձեւերը:

Նոր փոփոխություններով պետք է հստակ նախանշվեն անցումային դրույթներ, որով իշխանության մարմինների կազմավորումը եւ գործառնությունների իրականացումը կկատարվեն աստիճանաբար:

Կառավարման համակարգի նոր փոփոխությունները պետք է գործեն ի նպաստ իրավական, ժողովրդավարական, ինքնիշխան պետության նոր փուլի կայացման եւ ընկալելի ու ընդունելի լինեն ԼՂՀ միջազգային ճանաչման գործին աջակցող օտարերկրյա գործընթացների եւ միջազգային կառույցների համար:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում առավել հստակ պետք է ամրապնդվի ու ամրագրվի ԼՂՀ տարածքային ամբողջականության, ինչպես նաեւ անվտանգության ու պաշտպանության մասին դրույթները:

Քաղաքական ուժերը պետք է կողմնորոշեն հանրությանը՝ սահմանադրական փոփոխություններում որն է լավ կետ, որը՝ վատ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունները ներկայացված սահմանադրական հայեցակարգի վերաբերյալ դեռեւս առաջարկություններ չեն հնչեցրել:

Tert.am-ի հետ զրույցում այս մասին ասաց ԼՂ ԱԺ փոխնախագահ Վահրամ Բալայանը՝ նշելով, որ սահմանադրական փոփոխությունների հայեցակարգը ԱԺ չի ներկայացվել:

Խորհրդարանի փոխնախագահն ասաց, որ օրինագիծն ամենայն հավանականությամբ կներկայացվի նոյեմբերի վերջին: Ինչ վերաբերում է հանրային քննարկումներին, ապա Վահրամ Բալայանն ասաց, որ ոչ բոլորն են ծանոթ Սահ-

մանադրության փոփոխության նրբություններին:

«Ճշմարտությունը՝ պետք է ասել այն, որ ընդհանրության մեջ հասարակության բոլոր խավերը չեն ծանոթ կետերին, չգիտեն՝ որն է լավ, որն է վատ: Նման հարցերը պետք է քաղաքական ուժերը քննարկեն, կողմնորոշվեն, եզրահանգումների գան, ապա իրենց դատողությունները, վերլուծությունները հանրության դատին ներկայացնեն ու կողմնորոշեն հանրությանը», - նշեց Վահրամ Բալայանը:

ԱԺ փոխնախագահն ասաց, թե բոլոր երկրներում հանրությանը պատրաստում են նման փոփոխություններ կա-

տարելուց առաջ, ինչպես եւ Արցախում:

«Քաղաքական ուժերը կոչված են նրա համար, որ հանրությանը ճիշտ ճանապարհով տանեն: Քաղաքական ուժերը պետք է ձեւավորեն գաղափար ու դա մատուցեն իրենց ընտրողներին», - մանրամասնեց Բալայանը:

Թե ե՞րբ կդրվի հանրաքվեի նոր Սահմանադրությունը, Վահրամ Բալայանը դժվարացավ կոնկրետ օր մատնանշել, բայց նշեց, որ քննարկվում է 2017-ի սկզբին, մասնավորապես՝ փետրվարին, փաստաթուղթը քվեարկության դնելու հարցը:

Tert.am



Հայկական երկրորդ պետության գոյությունն օրինաչափություն է

Արցախի անկախության 25-ամյակը խորհելու եւ պատմությանը, որպես ճշմարիտ ուսուցիչ, անդրադառնալու խորհուրդ ունի իր մեջ: Առաջ գնալիս սխալներ չանելու համար պետք է շուտ-շուտ թերթել անցյալի էջերը, հետագա ուղին անսխալ կամ քիչ սխալներով ընթանալ:

Հայտնի է, որ 1923թ. հուլիսին բոլշևիկները, Թուրքիայում սոցիալիստական հեղափոխություն տարածելու տենդով բռնված, որոշեցին հայկական Ղարաբաղը նվիրաբերել տափաստաններից դեպի լեռնային արոտավայրերը քոչված, ոչխարներն արածացնելու նպատակով յաթաղաններում ապրող թուրքերին, որոնք ոչ մի կապ չունեին բնիկ բնակիչների՝ քրիստոնյա հայերի հետ: Տեղաբնակ հայերը քաղաքակրթության աստիճանով մի քանի անգամ բարձր էին կանգնած իրենց մշակույթով, իրենց գեոգրֆոնով, եւ ոչ մի առնչություն չունեին խաշնարած թաթարական թափափուկների հետ, որոնք հոգե-

բանության մեջ արմատացած էր թալանը, ուրիշի հողերը, ուրիշի հայրենիքը յուրացնելը: Սկսվեց տեղաբնակների նկատմամբ ծրագրավորված թալանչական քաղաքականություն՝ ոչնչացնել հայկականը, չթողնել ոչ մի հետք, գրություն, որ սերունդները հետագայում հայկական ոչինչ չգտնեն:

Ավելի քան քառորդ դար ազգայնկրոնական, քաղաքական եւ ուժային բազմաթիվ մարտահրավերների դիմակայած Արցախի Հանրապետության գոյությունն այլեւս անշրջելի է, քանզի չես կարող պարտության մատնել մի ազգի, ով առաջին հերթին հոգեպես է քեզվից ուժեղ, ում ժամանակավոր պարտության մեջ անգամ հաղթանակի ոգին դարերի դոփյունից է գալիս, հավաքվում ու պոռթկում ամենքիս երակներում: Մեր բոլոր հաղթանակները Սասունցի Դավթի բազուկներից էր կռած, Աշոտ Երկաթի, Տիգրան Մեծի, Վարդան զորավարի արյան կանչն էր, որ սերնդեսերունդ գալիս ու մեզ պայքարի էր կո-

չում: Հայտնի է, որ հաղթանակները կռում են ոգով ու ժողովրդով, այն ոգով, որ նստած է մեր մեջ ու մեզ պայքարել-ապրեցնել է տալիս, որոշում մեր ճակատագիրը, աշխարհում մեր գոյության իմաստը:

Փոքր ազգերը գոյատևելու համար մեծ ջանքեր պետք է թափեն: Նրանք պետք է անվերջ ապացուցեն իրենց դիմակայությունը, այլապես կոլ կզնան մեծ ազգերի շահերին, մանրադրամ կդառնան: Եվ մեր քիչ թվով զոհերն էլ մեզ համար ծանր էին, որովհետեւ բոլորին ճանաչում էինք անուն առ անուն ու շատ մոտ ընդունում յուրաքանչյուր գոհ: Լավագույն տղաների արյունը ազատության դիմաց մեր վարձատրությունն է, իսկ մարտնչող Արցախը մեր անձնական ու ընդհանուր երազանքների տունն է, համայն հայության համախմբողը:

Խամսայի 5 մելիքություններ, ԼՂՀ՝ սրանք պետականության պատմական շղթայի այն օղակներն են, որ մշտար-

բուն էին հայարցախցու հոգեբանական ծալքերում: Մենք տերն ենք մեր պատմության, մեր մշակույթի, որ աչքի լույսի պես պահել-պահպանել ենք ուժացում: Մեր հերոսական բանակի ուժը փրկեց մեզ արցախյան գոյապայքարում եւ վերակերտելու ուժ ներարկեց՝ վերքերից ամոքելու ու նոր պետություն կերտելու վերջնաճանապարհին:

Պայքարը միջազգային ճանաչման դաշտ է տեղափոխված: ԱՄՆ 7 նահանգներ արդեն ճանաչել են Արցախի անկախությունը: Ակտիվ դիվանագիտության արդյունքում ճանաչման գործընթացն ավելի մեծ մասշտաբներ կընդգրկի, մասնավորապես որ այդ գործում պաշտոնական կառույցներին գուզահեռ ընդգրկված են Սփյուռքի ՀՀԿ կառույցները:

Մեր նախնիները մեզ ճիշտ ուղի կցուցանեն՝ մի ձեռքին մուրճ, մյուսին՝ զենք... Իմաստունություն, որ հայի համար երբեք չի հնանալու:

Լիլիա ԲԱՂՅԱՆ

Դպրոցները՝ հայրենապաշտպանության օջախներ



խարեն:
Մեզ հետ զրույցում դպրոցի տնօրեն Լաուրա Մարտիրոսյանը տեղեկացրեց, որ քանի որ արցախյան գոյապայքարի ընթացքում դպրոցում տեղակայված է եղել Աշոտ Ղուլյանի վաշտը, դպրոցի առաջին հարկում խրատ ու պատգամ ներկայացնող փառքի սրահ է ստեղծվել, որտեղ երկու պատերին մեծ վահանակներ են փակցված՝ Բեկորի վաշտի եւ դպրոցի նահատակ շրջանավարտների նկարներով:

Դպրոցում տնօրինության, ուսուցչական կոլեկտիվի կողմից մեծագույն ուշադրություն է դարձվում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակությանը: «Ճիշտ է, դպրոցը անսում է այն բարեփոխումներին, որ որդեգրել է Արցախի կրթական համակարգը եվրոպական կրթական համակարգին հասնելու համար, սակայն դա բնավ չի խանգարում, որ մեր առաջին եւ գերակա խնդիրը համարենք հայեցի դաստիարակությունը»,- նշում է տիկին Մարտիրոսյանը:

Ռազմահայրենասիրական դաստիարակությունն առաջնային համարող դպրոցում աշխատում են սերտ կապեր ստեղծել ոչ միայն ծնողական հասարակության, այլ բանակի հետ, որպեսզի հայրենիքի գալիք պաշտպանների համար ավելի տեսանելի լինի բանակի կյանքը եւ նրանք պատրաստ լինեն հայրենիքի պաշտպանությանը:

2007, 2010թթ. հանրապետության մասշտաբով լավագույն դպրոց ճանաչված կրթօջախն ունի փարձառու ուսուցիչներ ու տաղանդավոր աշակերտներ: Դպրոցի կոլեկտիվից շատ ուսուցիչներ

հաղթել են «Տարվա լավագույն ուսուցիչ» անվանակարգում: Դպրոցի տնօրենը, 2015թ. մասնակցելով «Տարվա լավագույն տնօրեն» մրցույթին, ճանաչվել է հաղթող «Լավագույն ռազմահայրենասիրական դաստիարակություն» անվանակարգում: Բացի հանրապետական մասշտաբի հաջողություններից, կրթօջախն աչքի է ընկել արտադասարանական եւ արտադպրոցական աշխատանքների գծով՝ քաղաքապետարանի կողմից քանիցս պարգևատրվելով պատվոգրերով: Աշակերտները անմասն չեն միջազգային մասշտաբով կազմակերպվող մրցույթներից: «Կենգուրու», «Մեղվեժնուկ», «Մեղու» մր-

կարդակով հաղթանակ տարած աշակերտներ:

Դպրոցի վերանորոգումը վերջին անգամ 11 տարի առաջ է կատարվել, բայց, չնայած դրան, դպրոցը կործանված է գտնվում, ինչը տնօրենը վերագրում է ուսուցիչների եւ աշակերտների հոգատար վերաբերմունքին:

Նշենք նաեւ, որ ինչպես նախորդ տարիներին, այս տարի եւս հոկտեմբերի 6-ին՝ Բեկորի ծննդյան օրը, հերոսի հուշաքարի մոտ էլույթ ունեցան Ստեփանակերտի թիվ 2 դպրոցի սաները, ովքեր խոստացան հերոսի գործի շարունակողը լինել եւ վառ պահել նրա հիշատակը: Այնուհետեւ կազմակերպվեց «Աստղիկ-



ցույթներում բազմիցս հաջողություններ են գրանցել: Աշակերտներից Տիգրան Կիսիբեկյանը բազմիցս արժանացել է լավագույն մրցանակների: Լավ դրվածք ունի շախմատի ուսուցումը, կան 33 մա-

ների» երդման արարողություն՝ «Չարթունք» մանկապատանեկան դպրոցական կազմակերպության մեջ ընդգրկվելու համար:

Տարեկիկ ԱՐԱՋԱՆՅԱՆ

Առատության ու բարիքի տոն



Հոկտեմբերի 9-ին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում նշվել է Գյուղատնտեսության աշխատողի օրը: Մայրաքաղաքի հրապարակում տեղադրված տաղավարներում ներկայացված էին Արցախի բոլոր շրջանների բերք ու բարիքը: Ինչպես տեղեկացրին գյուղատնտեսության նախարարության աշխատակազմից՝ տոնավաճառ-ցուցահանդեսին մասնակցում էին Արցախի բոլոր շրջանները, նաեւ՝ հյուրեր Գյուղատնտեսության նախարարության աշխատակազմից: Այս տարի աննախադեպ մասնակցություն է գրանցվել. ավելի քան 700 ավտոմեքենա եւ գրեթե նույնքան էլ սեղանիկներ: Բոլոր շրջանների շրջվարչակազմերի մշակութային բաժինները հանդես են եկել մշակութային համարներով: Միջոցառման ընթացքում

մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության աշակցությամբ կայացել է տոնական համերգ: Արցախյան հողի բարիքների ցուցահանդեսին ներկա են եղել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգե արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը, պաշտոնատար այլ անձինք: Նախագահը գոհունակությամբ նշել է, որ Բերքի տոնը մեր հանրապետությունում արդեն իսկ դարձել է ավանդական, ընդգծելով, որ բարի ավանդույթներն անհրաժեշտ է պահպանել ու շարունակաբար զարգացնել: Զառաթաղի շրջանի Դրախտաձոր



գյուղից Վարդիթեր Ասատրյանը՝ չնայած այս տարի ավելի քիչ ապրանք է ներկայացրել, սակայն գոհ է տոնավաճառի ընթացքից ու գնորդների առատությունից: Իսկ Հաղորդի Ազոխ գյուղից Գոհար Առաքելյանը, բացի գյուղատնտեսական մթերքներից, տաղավարում ներկայացրել է նաեւ իր պատրաստած մուրաբաներն ու թօնները: Նշենք նաեւ, որ ինչպես անցած տարիներին, այս տարի եւս տոնավաճառին ակտիվ մասնակցությամբ առանձնացել է Զառաթաղի շրջանը՝ հաղթող ճանաչվելով «Լավագույն տաղավար» անվանակարգում: Զառաթաղի վարչակազմի աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը տեղեկացրեց, որ շրջանից բերքի տոնին մասնակցել են 54 համայնքների

բոլոր բնակավայրերը, ավելի քան 260 տաղավար՝ 364 ավտոմեքենաներով: Զառաթաղի շրջանի ներկայացրած ցուցադրական սեղանը, տաղավարները ճանաչվեցին լավագույնը: Աշխատակազմի ղեկավարի փոխանցմամբ՝ շրջանի բնակչությունը 450 մլն դրամի առետուր է կատարել: Նմանատիպ տոնավաճառները գյուղատնտեսական ապրանք արտադրողներին, տնտեսվարողներին ու անհատ սեփականատերերին հնարավորություն են տալիս ներկայացնելու իրենց արտադրանքը անմիջապես գնորդին, իսկ գնորդներին՝ մատչելի գներով ձեռք բերելու անհրաժեշտ մթերք ու ապրանքներ:

«ԱՊՍՈՍԺ»

Չրույց ընթերցողի հետ



Հարգելի պատճառներից ելնելով՝ «Ապառաժ» թերթը մեկ ամիս ուշացումով է լույս տեսնում: «Ապառաժ»-ի նախկին խմբագիր Հերմինե Ավագյանն ունեցավ զույգ արու զավակ, որի համար շնորհավորում ենք իրենց ընտանիքին: Սեպտեմբեր ամսից խմբագիր նշանակվեցի ես: Պետք է ավելացնեմ նաև, որ մեր թղթակից Արմինե Նարինյանը ես պատասխանատու քարտուղար Անուշ Աթամայանն այս ընթացքում ամուսնացել են: Արմինե Նարինյանը թողել է թղթակցային աշխատանքը, իսկ մեր մյուս թղթակից Լուսինե Թեոսյանը, ով շուրջ մեկ տարի աշխատել էր թերթի հետ, այժմ «Երկիր մեդիա» հեռուստաընկերության Արցախի թղթակիցն է: «Ապառաժ»-ի խմբագրությանն է միացել նախկին «Տասներորդ նահանգ» թերթի թղթակից Լիլիա Բաղդյանը, Տաթևիկ Աղաջանյանն էլ որպես լրագրող կհամագործակցի մեզ հետ:

Ես լրագրողական աշխատանքս սկսել եմ 1988 թվականից, Թեհրանում տպագրվող «Ալիք» օրաթերթում, որն ի դեպ մի ամիս առաջ տոնեց իր 85-ամյակը: Առիթից օգտվելով՝ շնորհավորում եմ իմ ընկերներին եւ գործընկերներին եւ շնորհակալություն հայտնում 85-ամյակի տոնակատարությանը մասնակցելուն հրավիրելու համար: Դժբախտաբար, ինձնից անկախ պատճառներով չկարողացա մասնակցել տոնակատարությանը: 2006-ից համագործակցել եմ «Ապառաժ»-ին:

Ընթերցողների հետ հաղորդակցվելու համար հանձնարարեցի թերթի լրագրողներին՝ երկուական հարցով դիմեն խմբագրին, որը, որպես զրույց ընթերցողի հետ, հրապարակում ենք այս համաժամանակում:

Խմբագիր Ա. Պուլուզյան

Լուսինե Թեոսյան

- «Ապառաժ» թերթը գործում է 1991 թվականից: Ըստ Ձեզ՝ ո՞րն է թերթի այսօրվա տարիներ գործելու գրավականը, եւ ինչպե՞ս եք պատրաստվում պահպանել հետաքրքրությունը թերթի նկատմամբ:

- Նախ եւ առաջ՝ պետք է նշեմ, որ «Ապառաժ» թերթը 1991 թվականից աշխատել է որպես 33 հաշվառության Արցախի ԿԿ պաշտոնաթերթ: Այդ իմաստով թերթն ունի իր հատուկ առաքելությունը՝ հաշվառության խոսքը դարձնել

ժողովրդի սեփականությունը: 25 տարվա աշխատանքի ընթացքում 337 Արցախի ԿԿ-ն միշտ էլ կարելի է թերթի դերը: Այսօր կարող եմ ասել, որ Արցախում ամենաշատ տպաքանակով տպվող թերթն է «Ապառաժ»-ը: Տպաքանակը 1000 օրինակ է, որը բաժանվում է 300 համայնքներում, 800 օրինակը «Արցախփոստ»-ի միջոցով ցրվում է շրջաններում: Դա մեր թերթի գլխավոր առավելությունն է: Թերթը պիտի զբաղվի նաև շրջանների հարցերով, մտահոգությունները պետք է բարձրաձայնվեն, եւ որպես 4-րդ իշխանություն՝ թերթն առաքելություն ունի հասարակության ձայնը լսելի դարձնել իշխանավորին:

- Այսօր Արցախում ընդդիմադիր մամուլ չկա: «Ապառաժ»-ը հանդիսանալով 337 Արցախի ԿԿ պաշտոնաթերթ՝ արդյո՞ք իր կյանքում անդրադառնալու է երկրի կառավարման խնդիրներին, հասարակությանը հուզող հարցերին:

- Պարտադիր չէ ընդդիմադիր մամուլ լինել, որ երկրի կառավարման մտահոգող հարցերին անդրադառնալ: «Ապառաժ»-ը նաև այդ առաքելությունը պիտի իր վրա վերցնի: Թեև հաշվառությունն իշխանության մաս է, իշխանության տարբեր օղակներում պատասխանա-

խոսները նաև առիթ կունենան մամուլով իրենց տեսակետները հասանելի դարձնեն հասարակությանը:

Տաթևիկ Աղաջանյան

- Ինչպե՞ս եք պատկերացում «Ապառաժ»-ի դերը Արցախի տեղեկատվական դաշտում՝ հաշվի առնելով թերթի երկշաբաթյա հրատարակությունն ու համացանցի հնարավորությունները:

- Յուրաքանչյուր թերթ, լրատվական միջոց ունի իր առաքելությունը, եւ ըստ այդմ էլ որոշում է իր ուղղությունը՝ քաղաքական, տնտեսական, վերլուծական եւ այլն: Որպես կուսակցական թերթ՝ «Ապառաժ»-ի հիմնական ուղղությունը հասկանալի է, որ պետք է լինի քաղաքական: Որպես տպագիր մամուլ, ինչպես վերը նշեցի՝ շրջաններ առաքվող թերթ, մեր քաղաքականությունը պետք է փոխանցվի շրջանների մեր ընթերցողներին: Իսկ կայքէջն այլ առաքելություն ունի: Կայքէջը կարող է նաև լինել լուր փոխանցող միջոց, լրատվամիջոց: Կայքէջը, ճիշտ է, վերջին հաշվով ներկայացնում է հաշվառության տեսակետները, բայց ավելի ազատ է՝ այլ տեսակետներ ներկայացնելու:



- Ձեր գնահատականը՝ Արցախում գործող ՀԼՄ-ների կատարած աշխատանքի վերաբերյալ, եւ, ըստ Ձեզ, ինչպիսի՞ խոչընդոտներ կան Արցախի ձայնը միջազգային տեղեկատվական ասպարեզում լսելի դարձնելու ճանապարհին:

- Բավականին լուրջ աշխատանք կատարելու Արցախի լրատվական դաշտում: ՀԼՄ-ները պետք է տարբեր կարծիքների փոխանակության, բախման ու բյուրեղացման համար որպես հարթակ ծառայեն: Այդ առումով շատ բացեր ունենք Արցախի լրատվամիջոցներում: Թեև «Արցախայն»-ը փորձում է ինչ-որ տեղ այդ ուղղությամբ աշխատանք տանել, հույս ունեմ, որ «Ապառաժ»-ը կկարողանա այդ ասպարեզում առաջատար դեր ստանձնել: Առիթից օգտվելով՝ հայտարարում եմ, որ «Ապառաժ»-ը բաց է տարբեր կարծիքների արտահայտման եւ բանավեճի համար՝ իհարկե խուսափելով ծայրահեղություններից եւ ինտրիգներից, որն այսօր համատարած է հայաստանյան լրատվամիջոցներում:

Իսկ հարցի երկրորդ մասով կարող եմ ասել, որ համարյա չունենք օտարալեզու լրատվություն: Ռադիոյով ունենք ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով թղթարկման ժամեր, հեռուստատեսությամբ՝ միայն ռուսերեն լրատվություն, իսկ կայքերի առումով՝ բավականին աշխատանք կատարելու: Պատճառներից մեկն էլ դա է, որ Արցախից լուրերը միջազգային տեղեկատվական ասպարեզում աննշան տեղ են գրավում:

Կառաջարկեի պետական օժանդակությամբ Արցախի լրատվական կենտրոն ստեղծել, որի հիմնական ուղղվածությունը կլինի տարբեր լեզուներով Արցախը աշխարհին ներկայացնելը: Դա իհարկե, «Ապառաժ» թերթի եւ կայքէջի առաքելությունը չէ, բայց դա անհրաժեշտություն է: Լրատվական կենտրոնի կարիքը զգացվեց մանավանդ ապրիլյան իրադարձությունների ժամանակ, երբ Արցախի պաշտոնական տեսակետը ներկայացվեց միայն երկրորդ օրը, այնպես՝ հենց առաջին իսկ ժամերից իրավիճակի պատկերն աշխարհի սեփականությունը պիտի լինի: Պետք է պահեստային կապի ցանց ունենալ, որ նման իրավիճակներում լրատվությունը հնարավորինս կարճ ժամկետներում առավելագույն արդյունավետությամբ համատարած դառնա:

Լիլիա Բաղդյան

- Ինչո՞վ կցանկանայիք, որ տարբերվեր «Ապառաժ»-ը արցախյան մյուս լրատվամիջոցներից:

- Ինչպես նշեցի «Ապառաժ»-ը կուսակցության տեսակետը արտահայտող մամուլ է, ի դեպ ամենաներկայաց կուսակցական մամուլը Արցախում: Շատ կցանկանայի, որ ամենաշատ լրագրողական մեկնաբանություններն ու տեսակետները արձարծվեին մեր թերթում, բանավեճի հարթակներ ստեղծեինք տարբեր տեսակետների բախման համար, որով եւ կաշխուժացնեինք թերթի էջերը, թե կայքէջը: Դա պատճառ կհանդիսանա, որ ինչ-որ առումով հետաքրքրություն առաջանա նաև քաղաքական իմաստով հարցերը վերլուծելու, հարկ եղած եզրակացությունների հանգեցնելու համար:

- Որպես թերթի նոր խմբագիր՝ ի՞նչ քաղաքականություն եք վարելու ներսում:

- Թերթը, մեծ ուշադրություն է դարձնելու հաշվառական մամուլում հրապարակվող կուսակցական տեսակետներին, հատկապես՝ Արցախի վերաբերվող: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Ապառաժ» կայքէջը հանդիսանում է կուսակցական մամուլի մասնիկ, կարող է իր վրա ստանձնել նաև Արցախի խոսնակի դերը, սկզբնաղբյուրը՝ Արցախում կատարվող բոլոր իրադարձությունները լուսաբանելու եւ արտերկրի մեր ընթերցողներին թարմ տեղեկատվություն հաղորդելու համար: Ներքին իմաստով՝ «Ապառաժ»-ը բաց է լինելու բոլորի համար, ովքեր ուզում են հողված հրապարակել, տեսակետ արտահայտել, որի նպատակը «հակա»-ն չէ, այլ «հանուն»-ը, այսինքն՝ կառուցողական դիրքորոշում արտահայտելը:

Մինչև ե՞րբ այդպես



ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պատրաստվում են այցելել տարածաշրջան: Այդ մասին հայտարարել է ամերիկացի համանախագահ Ջեյմս Ուորլիքը՝ նշելով, որ այցը նախատեսվում է կատարել հոկտեմբերի վերջերին, եւ որ դա լավ հնարավորություն է՝ շարունակելու Վիեննայում եւ Սանկտ-Պետերբուրգում բարձր մակարդակով սկսված բանակցությունները ու քննարկելու կարգավորման տարրերը:

Կարգավորման տարրեր ասելով՝ ամերիկացի դիվանագետը, անշուշտ, առաջին հերթին նկատի ունի շփման գծում լռության ռեժիմի պահպանման, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի թիմի ընդլայնման եւ հետաքննության մեխանիզմների տեղադրման ու կիրարկման հրամայականները, որոնց վերաբերյալ բանավոր համաձայնություն է ձեռք բերվել Ավստրիայի մայրաքաղաքում, ապա համատեղ հայտարարություն ընդունվել Ռուսաստանի Զյուսիսային մայրաքաղաքում տեղի ունեցած բարձր մակարդակի բանակցությունների արդյունքում: Ամիսներ են անցել այդ հանդիպումներից, մինչդեռ, ինչպես ասում են, սայլը տեղից չի շարժվում: Իհարկե, բանն այն չէ՝ եզները սայլի առջևից, թե՛ տետից են լծված: Պարզապես Ադրբեջանի իշխանություններն այդ ողջ ժամանակահատվածում շարունակում են խոչընդոտել բանակցային սայլի առաջընթացը՝ համառորեն եւ ամեն կերպ, մեկ՝ քար դնելով անիվների տակ, մեկ՝ փչացնելով սննինները: Թե

ինչո՞ւ՝ դժվար չէ կռահել: Առաջադրված խնդիրների լուծումը, ինչ խոսք, ռազմավարական անհրաժեշտությունն է, այսինքն՝ հակամարտության լիակատար ու վերջնական կարգավորում չի ենթադրում: Այն ընդամենը մարտավարական հրամայական է պարունակում նույն այդ նպատակի իրագործման ճանապարհին: Այլ կերպ ասած՝ կոչված է հարթելու հազար ու մի դարուկոսով պատված բուն կարգավորման ճանապարհը, այսպիսով իսկ՝ հեշտացնելու գործընթացի արդյունավետ առաջխաղացումը:

Մինչդեռ Ադրբեջանի իշխանությունների համար դա նշանակում է ձեռնպահ մնալ շանտաժի եւ ահաբեկության քաղաքականությունից, որ ահա ավելի քան երկու տասնամյակ է, ինչ նրանք իրականացնում են: Մի կողմից՝ փորձում են ահ ու սարսափի մթնոլորտի ստեղծմամբ հայկական կողմերին ստիպել հրաժարվել Արցախի անկախության իրողությունից, մյուս կողմից՝ ջանում են միջնորդական առաքելությունը ստանձնած պետություններին ստիպել, ընդունել տալ, որ հակամարտության գոտում իրադրության համընդունելի փոփոխության միակ եւ անվիճելի թելադրող կողմը Բաքուն է, հետեւապես՝ բանակցային գործընթացում առաջնայինն Ադրբեջանի ներկայացուցած պայմաններն ու պահանջներն են: Ուստի, բոլորովին էլ պատահական չէ, որ հակամարտ գործերի շփման գծում լարվածության աճը մշտապես զուգահեյսում է՝ նախորդելով կամ համանախագահների տարածաշրջանային այցերին եւ կամ հիմնախնդրի շուրջ անցկացվող բարձր մակարդակի հանդիպումներին: Ընդ որում՝ Բաքվի համար բացարձակապես նշանակություն չունի, որ իրավիճակի սրումը յուրաքանչյուր առանձին դեպքում երկուստեք հանգեցնում է մարդկային անիմաստ կորուստների:

Յեւ ինչու այդ նպատակին էր միտված Ադրբեջանի այս տարվա ապրիլյան արկածախնդրությունը, որի հետեւանքով երկու կողմից էլ հարյուրավոր զոհեր եղան: Բաքվի համար, անշուշտ, փույթ չէ, որ իր զոհերի թիվը մի քանի անգամ գերազանցել է հայկական կորուստներին: Կարելի է, Ադրբեջանի իշխանությունների հիվանդա-

գին ու սին երեւակայությամբ, թշնամական ճամբարում վախի ու սարսափի մթնոլորտի առաջացումն ու պահպանումն է՝ թեկուզ սեփական մեծաթիվ նյութական ու մարդկային կորուստների գնով: Այսինքն՝ նպատակն արդարացնում է միջոցները:

Նկատենք, որ Բաքվի նույն այդ ռազմատենչ մտայնության թափը վերջերս որոշակի կոտորվել է՝ կապված Յայաստանում ռուսական օպերատիվ-մարտավարական «Իսկանդեր» կայանքների տեղակայման փաստի հետ: Եվ եթե ապրիլյան պատերազմի ընթացքում ու հետագա ամիսներին ադրբեջանական իշխանությունները բառիս բուն իմաստով հոխորտում էին հայկականի հանդեպ իրենց զինական առավելությամբ, ապա ներկայումս հայտնվել են որոշակի տագնապի ու շփոթության մեջ՝ ռազմական հռետորաբանությունը համեմելով նախ Ռուսաստանի եւ Միացյալ Նահանգների հասցեին մեղադրանքներով, որ նրանցից առաջինն իր այդ գերադրական զինատեսակը տրամադրել է Յայաստանին, իսկ երկրորդն իր հերթին իբր թե Լեռնային Ղարաբաղի տնօրինմանն է հանձնել C4ISR տիպի ժամանակակից դիտարկման համակարգ՝ շփման գծում եւ որոշակի խորքային տարածքում հակառակորդի գորական շարժերին հետեւելու համար: Մեկ դժգոհում է, ինչպես օրերս այդ մասին կառավարության նիստում հայտարարել է նախագահ Իլիհամ Ալիևը, որ միջազգային հանրությունը ճանաչում է գործադրում Բաքվի վրա՝ ստիպելով ճանաչել ԼՂՀ անկախությունը: Մեկ ծնծղաներ է հնչեցնում, թե Իսրայելից եւ Ուկրաինայից ձեռք է բերելու համարժեք սպառազինություն (հակահրթիռային պաշտպանության «Երկաթե գմբեթ» եւ «Ամպրոպ-2» օպերատիվ-մարտավարական հրթիռային կայանքներ), որոնց շուրջ արդեն առկա են համապատասխան նախնական բանավոր պայմանավորվածությունները: Մեկ էլ սպառնում է, ինչպես այդ երկրի պաշտպանության նախարար Չաքիր Յասանովն է դարձյալ օրերս հոխորտացել առաջնագիծ կատարած տեսչական շրջայցի ժամանակ, թե Ադրբեջանի զինված ուժերն արդեն իսկ պատրաստ են ոչնչացնելու թշնամու «Իսկանդեր» կայանքները: Մի խոսքով՝ ծավալված է մուլա-

գար մի ճամարտակություն, որի հիմքում, վերլուծաբանների համոզմամբ, առայժմ առարկայական ոչինչ չկա: Մանավանդ, ռազմական փորձագետների գնահատմամբ՝ նշված հակամիջոցների ձեռքբերումը տակավին մտադրության շրջանակներում է, առավել եւս՝ իսրայելական արտադրության «Երկաթե գմբեթ» համակարգն իրականում անզոր է օդում ոչնչացնելու «Իսկանդեր» հրթիռները:

Եվ ահա նույն այդ պայմաններում, կրկնում են, երբ հակամարտ գործերի շփման գծում Բաքուն չի դադարեցնում, ընդհակառակը՝ առավել սաստկացնում է սադրիչ կրակոցները տարբեր զինատեսակներից, շարունակում ռազմատենչ հոխորտանքները հայկական կողմերի հասցեին, արագացնում ժամանակակից զինատեսակների փնտրտուքներն աշխարհի տարբեր երկրներում, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները պատրաստվում են այցելել Ադրբեջան, Յայաստան եւ Լեռնային Ղարաբաղ: Ասել, թե միջնորդական առաքելության անդամ-դեսպաններն այն աստիճան միամիտ են, որ չեն հասկանում, թե այս անգամ եւս ձեռնունայն պիտի վերադառնան, երեւի թե սխալված կլինենք: Բայց, հարց է ծագում՝ իմանալով հանդերձ, որ Բաքվում իրենց առաջարկություններն ու պնդումները հնչելու են ոչ այլ կերպ, քան՝ ձայն բարբառո հանապատի, ինչո՞ւ են գալիս: Յարավոր է խոսքս միամիտ հնչի, բայց, այնուամենայնիվ, կարծում եմ՝ գալիս են զուտ իրենց, այսպես կոչված, խաղաղարար առաքելության հերթական քայլն արձանագրելու համար, որին, բնականաբար, հաջորդելու են նրանց, իսկ ավելի բարձր մակարդակով՝ համանախագահ գերտերությունների դեկավարների արդարացումները, թե դարաբաղյան հանգույցի լուծումը հնարավոր է բացարձակապես հակամարտ երկրների իշխանությունների քաղաքական կամքի դրսեւորման պարագայում միայն: Մինչդեռ, թե միջնորդների այցի օրերին եւ թե, մանավանդ, նրանց վերադարձից հետո, առաջնագծում շարունակելու են հնչել մահաբեր կրակոցները՝ երկուստեք խլելով հերթական երիտասարդ կյանքեր: Բայց մինչև ե՞րբ այդպես...

Միքայել ՅԱԶՅԱՆ

Ամենը կատակներ Կամիթներ

Թե ժլատների մի մրցույթ լինի, Առաջին տեղը նրան կտրվի: ... Զգիտես ինչպես բուհն ավարտել, Մի նոր հիմնարկի նոր պետ է դառել, Ու երկու ծայրում ամեն ինչ «կերել», Զիմա խնդրում է «սխալը ներել»: ... Նա շատ է սիրում առատ սեղանը Բայց, գիտեք, միայն ուրիշի տանը: ... Այսքան տարիներ գյուղը չի հիշել, Օրենքուրգում է ծնունդը նշել, Զիմա եկել ու... գյուղում է ապրում, Ասում է՝ շենից սիրուն տեղ չկա աշխարհում: ... Ուրիշի տանը գինին խմում է թեյի բաժակով, Իսկ իրենց տանը՝ բժշկի տված հատուկ սրվակով: ... Ամեն տեղ շրջել, քեֆեր է արել,

Նավարկել, անցել հաղող օվկիանը, Զիմա, երբ արդեն ութսուն է դառել, Ուզում է տեսնել հոր գերեզմանը: ... Սիրում է տոլման, հավի կոտլետը, Դե, պարզ է, թթի արաղն էլ հետը: ... Երբ պաշտոն չունի, պարզ էր, մատչելի, Բոլորի հանդեպ՝ ուշադիր, բարի, Զիմա որ աթոռ ու պաշտոն ունի, Ասես չի ուզում բարեւո առնի: ... Էշի համար նոր համես են կարել, Կարծում է՝ հրեղեն նժույգ է դառել: ... Աներես ճանճը նստել է պոչին, Ասում է՝ իմն է այս չաղիկ մոզին: ... Կար մի ժամանակ՝ նրա անունից սարեր էր շրջում, Զիմա, երբ չկա, ասում է՝ սկի չեմ էլ ճաչում:

... Այծը էլ կովին տեսնել չի ուզում, Ասում է՝ ինչո՞ւ ինձ պես չի հագում: ... Ծատ է պարծենում ասպիրանտ թոռով, Փույթ չէ, որ բուհը ավարտեց գոռով: ... Ութ-ինը տարում բուհ է ավարտել, Ութ-ինը մաքուր անուն մրտտել: ... Ինչ խոսք, շքեղ է դրա գլխարկը, Բայց, ցավոք սրտի, դրում է տակը: ... Ինքը մի բան չէ, արյունը՝ նույնպես, Բայց ման է գալիս բարոնուհու պես: ... Նա հիմա տեր է մի մեծ հիմնարկի, Ու էլ չի ժպտում կնոջն անհարկի: ... Բարձրացրել են թոշակը շորից, Տարբերությունը՝ չորս կիլո բրինձ: ... Ասում են՝ երեկ պարոն Զանեսը զրկվել

է այնքան փափուկ աթոռից, Ու կես ժամ չանցած՝ հոգին ավանդել պզտիկ ավելի ուժգին ցնցումից: ... Նա շեֆի առաջ ծռում է մեջքը, Որ չիմանա թե ինչ է վայրէջքը: ... Զիմա դատեցին, կապեցին գոմում, Որ էլը հանգիստ արածի հոտում: ... Այս տարի հազիվ երկու լրարիկ գիրք է կարդացել, Ու կարծում է, թե բոլոր մեծերից առաջ է անցել: ... Թե Աթոռ ունի, Թամարը նրան մեծ է համարում, Աթոռից զրկվեց՝ Թամարի աչքում մարդ է անանում:

Միքայել ԲԱԼՅԱՆ թղթակառու ուսուցիչ